ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30.09.2019թ.
Ժամը 11:20

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ Հ.Մելիքյանը,

գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ.Ուստյանը,
- ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության գլխավոր մասնագետ Վ.Իրիցյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

Բացակայում էր - ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ.Հունանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին

(Հ.Մելիքյան)

1.1 ՀՀ կառավարությանն եկամուտների կոմիտեի **25.09.2019թ.-ին** տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **Ա/Ձ «Աննա Սահակյան»**-ն և **«Մաստեր Լազեր»** ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):

23.09.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին:

1.2 30.09.2019թ. հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման չափորոշիչները գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, **1, 2, 4, 8 և 12-րդ** չափաբաժինների մասով **Ա/Ձ «Աննա Սահակյան»**-ին հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից, իսկ 3 և 11-րդ չափաբաժինների մասով՝ **«Մաստեր Լազեր» ՍՊԸ**-ին և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Հ.Մելիքյան
Գնահատող	_____	Գ.Ուստյան
Գնահատող	_____	Վ.Իրիցյան
Գնումները համակարգող	_____	Մ.Ամիրյան